# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

“20 ”հունիսի 2012թ.

№ 41-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՊԱՆԻ N 13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, հիմք ընդունելով «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ Դ.Ավագյանի գրավոր դիմումը,

**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. 2012թ. հունիսի 22-ից լուծել «Կապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Դարիկո Ավագյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ Դ. Ավագյանի անձնական դիմումը:

2. 2012թ. հունիսի 21-ից «Կաապանի N 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Զավեն Ստեփանյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի պաշտոնի համար մրցույթի անցկացումն ու նշանակումը:

Հիմք՝ Զ. Ստեփանյանի անձնական դիմումը:

3.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում և հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Կոզմանով Կառլեն | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ) |
| Գրիգորյան Արսեն | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ |
| Հարությունյան Գայա | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ |
| Ստեփանյան Զավեն | տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (ընդունող) |
| Ավագյան Դարիկո | «Կապանի N 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ նախկին տնօրենի պաշտոնակատար (հանձնող) |

4.Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** Ս.Խաչատրյան **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.հունիսի 20
ք. Կապան